ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻՆ՝ ԿԱՐԳԱԼՈՒՑԾ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊՈԼԻՍ

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ Տ. ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՍԼԱՆՅԱՆԻՆ[1]

Հայրապետական կոնդակով կարգալուցած ենք հայտարարել և վարել հայ բոլոր եկեղեցիներից ու դասել աշխարհականների շարքը կախակայլեր՝ Հմայակ ծ. վարդապետ Պախքիարյանին, Սահակ ծ. վարդապետ Փափազյանին և Թովմա ավագ քահանա Շիկահերին՝ որպես Հայ եկեղեցուն անհավատարիմներ, Ազգային-եկեղեցական ժողովներով ընդունված Հայ եկեղեցու կարգ ու կանոնները խաթարողներ, և ազգընտիր Կաթողիկոսի հրամանների հանդեպ ըմբոստացողներ: Փաստական հիմնավորումները տեսնել Հայրապետական կոնդակում:

Իսկ մնացյալ երեք կախակայլերի՝ Զարմայր ծ. վարդապետ Կեզյուրյանի, Աբրահամ ավագ քահանա Էպեյանի և Սերովբե ավագ քահանա Պուրմայանի կախակայման պատիժը մի տարով երկարել ենք՝ հուսալով, որ կզղջան և ներման կարժանանան:

Վերոհիշյալ որոշումները ուղարկում ենք անմիջապես գործադրելու:

ԳԵՈՐԳ Զ.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ ԲՈԼՈՐ ԹԵՄԵՐԻՆ՝ ՎԵՀԱՓԱՌԻ ՀՈԲԵԼՅԱՆԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վեհափառ Հայրապետի Հոբելյանի տոնակատարությունը ժամանակավորապես հետաձգվում է: Տոնակատարության մասին լրացուցիչ կհայտնենք:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

---

1. Վեհափառ Հայրապետի սույն հեռագիրը ուղարկված է եղել նախքան պատժական կոնդակի առաքումը։